Արձանագրություն N 3

ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-20/75 ծածկագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կազմակերպված՝ բաց մրցույթով ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ու ճաշարանի վերանորոգման աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան
29.04.2020թ. ժ. 10:00
Նախագահ՝ Ա. Կարապետյան
Անդամներ՝ Թ. Համբարձումյան, Ա. Մարգարյան, Ա. Գևորգյան, Մ. Բաբայան
Քարտուղար՝ Մ. Ավագյան

Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կարապետյան

1.1 Արձանագրվեց, որ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ մասնակիցը ժամանակին ներկայացրել է բանկային երաշխիքի բնօրինակը:
1.2 Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ԵՊՀ ռեկտորին ՀՀ ԿԳՄՍ նախարար պարոն Ա. Հարությունյանի կողմից ուղարկված ՀՀ Ֆինանսների նախարար Ա. Ջանջուղազյանի կարծիքը, որը արվել էր «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ կողմից նրան ուղարկված բողոք-նամակի կապակցությամբ, որտեղ վերջինս անհամաձայնություն էր հայտնել հանձնաժողովի երկրորդ նիստում իր հայտը մերժելու վերաբերյալ: Մասնավորապես Ֆինանսների նախարարը տեսկետ էր հայտնել, որ հայտը ենթակա չէր մերժման, քանի որ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի նախահաշիվ-ծավալաթերթում ընդհանուր գումարը եղել էր 81064535.58 դրամ,
1.3 Հանձնաժողովը ծանոթացավ ՀՀ ԿԳՄՍ և Ֆինանսների նախարարների նամակներին և արձանագրեց հետևյալը.
ա) հանձնաժողովի որոշման համար հիմք է հանդիսացել «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկը, որում առկա էր թվաբանական սխալ (81064536 դրամ), իսկ նախարարի նամակում հղում է արվել շտկված ծավալաթերթ-նախահաշվի թվերին, որը ներկայացված չի եղել «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ-ի մրցույթին ներկայացված հայտում և կազմվել է մրցույթից հետո: Մրցույթին ներկայացված էր 81064534.8 դրամ ընդհանուր գումարով ծավալաթերթ-նախահաշիվ:
բ) համաձայն Գնումների օրենսդրությանը գնային առաջարկում տեղ գտած սխալները ենթակա չեն շտկման:
1.4 Հանձնաժողովը որոշեց անփոփոխ թողնել իր երկրորդ նիստի ժամանակ կայացրած որոշումները:
1.5 Հանձնաժողովը որոշեց 1 չափաբաժնի մասով պայմանագիր կնքել «Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ:
1.6 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր՝ սկսված 04.05.2020թ.-ից: Հանձնաժողովը կազմեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել այն.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին
Ընթացակարգի ծածկագիրը ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/75

1.7 Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:
1.8 Հաջորդ նիստի օր նշանակվեց 15 մայիսի 2020 թ.՝ ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ _____ Ա. Կարապետյան

Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ _____ Ա. Գևորգյան

_____ Մ. Բաբայան

Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝

_____ Թ. Համբարձումյան

_____ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ _____ Մ. Ավագյան